Նախագիծ 46

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով խրախուսել հիդրոէներգետիկայի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում և հիմք ընդունելով «Էներգետիկիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի ե) ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Առաջարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանել մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում .....:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու առաջարկության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

ՀՀ կառավարության սույն որոշման նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետությունում հիդրոէներգետիկայի զարգացումը խրախուսելու նպատակով փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանել մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու առաջարկության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

«Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու առաջարկության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու առաջարկության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

«Փոքր հիդրոէլեկտրակայանների համար առավելագույն հզորություն սահմանելու առաջարկության մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: